Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 940 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՄԻԼԼԻԱՆՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ «Ս. ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝
«ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Աշոցք համայնքի «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի և նրան կից տեղակայված 21 բուժական ամբուլատորիաները շարունակական հիմունքներով մատուցելու են անվճար առողջապահական ծառայություններ Աշոցք համայնքի և Հայաստանի Հանրապետության բոլոր այն անձանց, որոնք կցանկանան օգտվել հիվանդանոցի ամբողջական բժշկական ծառայություններից (արտահիվանդանոցային և հիվանդանոցային՝ մանկական, մանկաբարձա-գինեկոլոգիական, վիրաբուժական, և թերապևտիկ բաժանմունքներից), ինչպես նաև անապահով ընտանիքների սոցիալական բեռը թեթևացնելու համար տրամադրվելու է օգնություն՝ դեղորայք, հագուստ, կոշիկ, սննդամթերք, այդ թվում՝ դրամային աջակցություն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1) Կամիլլիանների կրոնական միաբանություն (Կապրիատե Սան Ջերվազիո/ Բերգամո 24042, Վիա Վիտտորիո Վենետո, 47, Իտալիա). 2) ՊՐՈ. ՋԱ մարդկային զարգացման և առողջության հիմնադրամ (Միլան 10124 Վիա Ռ. Լեպետիտ 4, Իտալիա). 3) Մադիան Օրիզզոնտի Կամիլլիանական առաքելության հիմնադրամ (Տորինո, Վիա Սան Կամիլլո դե Լելլիս 28, Իտալիա)
4.	Ծրագիրը կատարողը	Կամիլլիանների միաբանության «Ս. Կամիլլո» բարեգործական հիմնադրամ (Շիրակի մարզի Աշոցք համայնք, ՀՎՀՀ՝ 05806438)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզի Աշոցք համայնք. առողջապահության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	1,891,100,000 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	1) Հայաստանի Հանրապետության բոլոր այն անձինք, որոնք կցանկանան օգտվել «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի ամբողջական բժշկական ծառայություններից, ինչպես նաև կարող են օգտվել Աշոցքի շրջակա բնակավայրերում տեղակայված՝ մշտապես գործող 21 բուժական ամբուլատորիաներից. 2) հիվանդանոցի և նրան կից 21 բուժական ամբուլատորիաների շուրջ 150 աշխատակիցներ և նրանց ընտանիքները. 3) հիմնականում Աշոցք համայնքի, ինչպես նաև Աշոցք համայնքից դուրս բնակվող և սոցիալապես անապահով ընտանիքները՝ շուրջ 700 ընտանիք, որոնք մարդասիրական օգնություն են ստանում: Օգնության տրամադրման չափանիշը հիվանդության կամ ավելի ընդհանրացված կարիքի առկայությունն է: Սոցիալապես անապահով ընտանիքների ցանկերը կազմելիս հիմնադրամը համագործակցում է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու տարածքային միասնական սոցիալական ծառայության հետ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցն իր չորս ստացիոնար բաժանմունքների (թերապիայի, վիրաբուժության, գինեկոլոգիայի/մանկաբարձության և մանկաբուժության), ինչպես նաև Աշոցք համայնքի բնակավայրերում տեղակայված 21 բուժական ամբուլատորիաների միջոցով, շարունակական հիմունքներով, մատուցելու է անվճար բուժսպասարկում 500,000,000 դրամի չափով. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 2) սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն բաշխելու համար դեղորայքի, սննդամթերքի, հագուստի և կոշիկի ներմուծում կամ ձեռքբերում՝ 55,000,000 դրամի չափով, նաև գումարային աջակցություն՝ 195,000,000 դրամի չափով. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 3) «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցում օգտագործելու համար բուժպարագաների, մաքրության պարագաների, սարքավորումների, սննդամթերքի, սպիտակեղենի, համազգեստներ պատրաստելու կտորեղենի, մահճակալային պարագաների, համակարգիչների, գրենական պիտույքների ներմուծում կամ ձեռքբերում՝ 150,000,000

		դրամի չափով. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 4) անվճար սնունդ՝ նախաճաշ, ճաշ, ընթրիք ստացիոնար հիվանդներին և հերթափոխող բժշկական աշխատակիցներին՝ 45,000,000 դրամի չափով. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 5) անվճար սնունդ՝ ճաշ, հիվանդանոցի ցերեկային բժշական անձնակազմին՝ 13,000,000 դրամի չափով. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 6) անվճար դեղորայքի և բուժպարագաների տրամադրում ստացիոնար հիվանդներին՝ 53,000,000 դրամի չափով. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 7) դեղորայքի և բուժպարագաների անվճար տրամադրում հիվանդանոցին կից 21 բուժական ամբուլատորիաներում՝ 3,000,000 դրամի չափով. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 8) բուժառուների սպասարկման համար մեկ շտապ օգնության և մեկ մարդատար մեքենաների ձեռքբերում կամ ներմուծում՝ 70,000,000 դրամի չափով. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 9) «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցն ունի մոտավորապես 140-ից 150 աշխատակից, և անձնակազմի աշխատավարձը նախատեսված է 750,000,000 դրամի չափով. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 10) կազմակերպական ծախսեր՝ 57,100,000 դրամ. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Սնդամթերքի, նոր հագուստի, կոշիկի, դեղորայքի, բժշկական սարքավորումների, բժշկական պարագաների, համակարգիչների, գրենական պիտույքների, մաքրության պարագաների, բուժսարքավորումների, անեստետիկ միջոցների ձեռքբերում կամ ներմուծում՝ 200,000,000 դրամի չափով. 2) մեկ շտապ օգնության և մեկ մարդատար մեքենաների ձեռքբերում կամ ներմուծում՝ 70,000,000 դրամի չափով 3) էլեկտրաէներգիայի ծառայությունների (ներառվում են Տիրամայր Նարեկի հիվանդանոցը, ինչպես նաև հիվանդանոցին կից 21 բուժական ամբուլատորիաները, բաժանորդ քարտի համար՝ 7250012 և 6250012) ձեռքբերում՝ 40.000.000 դրամի չափով. 4) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ՝ 6,700,000 դրամի չափով. 5) հեռախոսակապի, շարժական կապի և ինտերնետ ծառայություններ՝ 2,000,000 դրամի չափով. 6) շարժական հեռախոսակապի ծառայություն՝ 5,400,000 դրամի չափով. 7) հեռախոսների սարքավորումների և աքսեսուարների ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով. 8) շտապ օգնության մեքենաների համար բենզինի և դիզվառելիքի ձեռքբերում՝ 8,000,000 դրամի չափով. 9) ջեռուցման համար գազի կամ դիզվառելիքի ձեռքբերում՝ 32,600,000 դրամի չափով. 10) հիվանդանոցին անհրաժեշտ բլանկների տպագրում՝ 3,600,000 դրամի չափով. 11) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 2,400,000 դրամի չափով. 12) բենզին և դիզվառելանյութ ադմինիստրատիվ մեքենաների համար՝ 3,500,000 դրամ. 13) վարչական և շտապ օգնության ավտոմեքենաների ընդհանուր սպասարկման ծառայություններ՝ 5,000,000 դրամի չափով. 14) փաստաբանական (իրավագետի) խորհրդատվություն՝ 1,800,000 դրամի չափով:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) Հեռախոսակապի և շարժական կապի ծառայություններ՝ 2,000,000 դրամի չափով. 2) շարժական հեռախոսակապի ծառայություն՝ 5,400,000 դրամի չափով. 3) աուդիտորական ծառայություն՝ 2,400,000 դրամի չափով. 4) բենզին և դիզվառելիք վարչական ավտոմեքենաների համար՝ 3,500,000 դրամի չափով. 5) բենզին և դիզվառելանյութ շտապ օգնության ավտոմեքենաների համար՝ 8,000,000 դրամի չափով. 6) ավտոմեքենաների ընդհանուր սպասարկում/ վարչական և շտապ օգնության ավտոմեքենաների համար՝ 5,000,000 դրամի չափով. 7) փաստաբանական (իրավագետի) խորհրդատվություն՝ 1,800,000 դրամի չափով. 8) վարչական մասի աշխատակիցների աշխատավարձ՝ 29,000,000 դրամի չափով Ընդամենը 57,100,000 դրամ՝ բյուջեի մոտ 3,4%-ը:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Առողջապահության նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և միասնական սոցիալական ծառայության հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կիրականացվի Կամիլլիանների միաբանության «Ս. Կամիլլո» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: Հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ